

Համարը N 662	Տեսակը Ինկորպորացիա
Տիպը Որոշում	Կարգավիճակը Գործում է
Սկզբնաղբյուրը ՀՀՊՏ 2001.08.20/27(159)	Ընդունման վայրը Երևան
Հոդ.590	
Ընդունող մարմինը ՀՀ կառավարություն	Ընդունման ամսաթիվը 20.07.2001
Ստորագրող մարմինը ՀՀ վարչապետ	Ստորագրման ամսաթիվը 20.07.2001
Վավերացնող մարմինը ՀՀ Նախագահ	Վավերացման ամսաթիվը 20.07.2001
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը 30.08.2001	Ուժը կորցնելու ամսաթիվը

Ճշգրտում

Որոշումն ուժը կորցրել է 25.02.16 N 238-Ն որոշմամբ, բացառությամբ սույն որոշմամբ հաստատված կարգի 6-րդ և 7-րդ կետերի:

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ՀՀ-ՈՒՄ ԱՍՊԻՐԱՆՏՈՒՐԱՅՈՒՄ ԵՎ ԴՈԿՏՐԱՆՏՈՒՐԱՅՈՒՄ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Վավերացնում եմ»
 Հայաստանի Հանրապետության
 Նախագահ Ռ. Քոչարյան
 20 հուլիսի 2001 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 հուլիսի 2001 թվականի N 662
 քաղ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՍՊԻՐԱՆՏՈՒՐԱՅՈՒՄ ԵՎ ԴՈԿՏՐԱՆՏՈՒՐԱՅՈՒՄ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ
(որոշումն ուժը կորցրել է 25.02.16 N 238-Ն-ով, բացառությամբ սույն որոշմամբ հաստատված կարգի 6-րդ և 7-րդ կետերի)

*Հաստատված է
 ՀՀ կառավարության 2001 թվականի
 հուլիսի 20-ի N 662 որոշմամբ*

Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՍՊԻՐԱՆՏՈՒՐԱՅՈՒՄ ԵՎ ԴՈԿՏՐԱՆՏՈՒՐԱՅՈՒՄ ՈՒՍՈՒՑՄԱՆ

(1-5-րդ կետերն ուժը կորցրել են 25.02.16 N 238-Ն)

6. Ասպիրանտուրայի, դոկտորանտուրայի և հայցորդների համակարգի ձևերով գիտական կադրեր պատրաստելու իրավունք ունեն այն բուհերն ու կազմակերպությունները, որոնք ունեն բարձր որակավորմամբ գիտամանկավարժական և գիտական կադրեր, ժամանակակից

գիտահետազոտական ու փորձարարական բազա, հեղինակավոր գիտական դպրոցներ, մասնակցում են հանրապետական և միջազգային գիտակրթական ծրագրերի, նախագծերի մշակմանն ու իրականացմանը:

7. Ասպիրանտուրայի, դոկտորանտուրայի ձևերով գիտական կադրեր պատրաստելու կամ այն դադարեցնելու վերաբերյալ առաջարկությունները համապատասխան նախարարությունների և գերատեսչությունների կողմից ներկայացվում են Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն (այսուհետև՝ նախարարություն), իսկ Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի կազմակերպությունների կողմից՝ Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի նախագահություն՝ կցելով սույն կարգի 2-րդ կետում նշված մասնագիտությունների ցանկը, յուրաքանչյուր մասնագիտությամբ՝ գիտամանկավարժական կադրերի և գիտական աշխատողների կազմը, նրանց գիտական աշխատությունների ցանկը, ինչպես նաև բուհի և կազմակերպության գիտական (գիտատեխնիկական) խորհրդի որոշումը:

Ասպիրանտուրայի և դոկտորանտուրայի ձևերով գիտական կադրեր պատրաստելու և այն դադարեցնելու մասին որոշում ընդունվում է փորձաքննության հիման վրա, որը սույն կարգի 6-րդ կետում նշված՝ նախարարության կողմից սահմանված չափանիշներով անցկացվում է նախարարության, իսկ Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի համակարգում՝ Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի նախագահության կողմից: Ասպիրանտուրայի ու դոկտորանտուրայի բացումը և դրանց գործունեության դադարեցումը ձևակերպվում է Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի, իսկ Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի համակարգում՝ Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի նախագահի հրամանով:

Բուհերում, կազմակերպություններում ասպիրանտուրայի և դոկտորանտուրայի գիտամեթոդական ղեկավարությունն ու գործունեության նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է նախարարությունը:

(8-44-րդ կետերն ուժը կորցրել են 25.02.16 N 238-Ն)